

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Արմավիրի մարզի Ակնաշենի գյուղապետի 2013 թվականի տարեկան կատարած աշխատանքների վերաբերյալ

2014 թվականի հունվարի 20-ին ժամը 14⁰⁰-ին տեղի ունեցավ Ակնաշենի գյուղապետի 2013 թվականի տարեկան հաշվետու նիստը: Նիստտին մասնակցում էին ավագանու անդամները, համայնքի 65 (վաթսուն հինգ) բնակիչներ և Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ՝ մարզպետի տեղակալ Դավիթ Սամսոնյանը:

Ջեկուցող գյուղապետ՝ Միսակ Միսակյան

2013 թվականի տարեկան բյուջեյով նախատեսվել է վարչական բյուջեի եկամուտ՝ 27609.5 (քսանյոթ միլիոն վեց հարյուր իննը հազար հինգ հարյուր) հազար դրամ, այդ թվում՝

1. Հողի հարկից եկամուտ՝ 3800.0 (երեք միլիոն ութ յարյուր) հազար դրամ.
 2. Գույքահարկ՝ 2800.0 (երկու միլիոն ութ հարյուր) հազար դրամ.
 3. Տեղական տուրքեր՝ 181.7 (մեկ հարյուր ութանասուն մեկ) հազար դրամ.
 4. Համայնքի սեփականություն համարվող հողերից վարձավճար՝ 650.4 (վեց հարյուր հիսուն հազար չորս հարյուր) հազար դրամ.
 5. ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքին հատկացվող դոտացիա՝ 19897.2 (տասնինը միլիոն ութ հարյուր իննսուն յոթ հազար երկու հարյուր) հազար դրամ.
 6. Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեյին տրամադրվող նպատակային հատկացում՝ 280.2 (երկու հարյուր ութանասուն հազար երկու հարյուր) հազար դրամ.
- Տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է վարչական բյուջեյի մասով՝ 219.3 (երկու հարյուր տասնինը հազար երեք հարյուր) հազար դրամ, ֆոնդային մասով՝ 1091.0 (մեկ միլիոն իննսունմեկ հազար) հազար դրամ:

2013 թվականին տարեկան վարչական բյուջեի եկամուտների պլանը կազմել է 27609.5 (քսանյոթ միլիոն վեց հարյուր իննը հազար հինգ հարյուր) հազար դրամ: Փաստացի եկամուտները կազմել են՝ 27214.2 (քսանյոթ միլիոն երկու հարյուր տասնչորս հազար երկու հարյուր) հազար դրամ: 2013 թվականի տարեկան պլանը կատարվել է 98.6 %-ով, այդ թվում համապատասխանաբար՝

1. Հողի հարկի տարեկան պլանը կազմել է՝ 3800.0 հազար դրամ, փաստացի մուտքագրվել է՝ 3097.4 հազար դրամ,
2. Գույքահարկի պլանը՝ 2800.0 հազար դրամ, փաստացին՝ 3305.4 հազար դրամ, կամ՝ 118.0%
3. Տեղական տուրքերի պլանը՝ 181.7 հազար դրամ, փաստացին՝ 194.3 հազար դրամ, կամ՝ 106.9%.
4. Համայնքի սեփականություն համարվող հողերից վարձավճարի պլանը 650.4 հազար դրամ, փաստացին՝ 339.7 հազար դրամ.
5. Դոտացիայի տարեկան հատկացումների պլանը կազմել է 19897.2 հազար դրամ, հատկացվել է 100%-ով:
6. Նպատակային հատկացումները՝ 280.2 հազար դրամ.

2012 թվականի տարեկան վարչական բյուջեի եկամուտների պլանը կազմել է՝ 25796.3 հազար դրամ, փաստացի եկամուտները՝ 26049.0 հազար դրամ, կամ՝ 101.0% այդ թվում՝

1. Հողի հարկի տարեկան պլանը կազմել է՝ 4400.0 հազար դրամ, փաստացի մուտքագրվել է՝ 4516.6 հազար դրամ, կամ 102.6%.
2. Գույքահարկի պլանը՝ 2800.0 հազար դրամ, փաստացին՝ 3330.7 հազար դրամ, կամ՝ 118.9 %.
3. Տեղական տուրքերի պլանը՝ 187.9 հազար դրամ, փաստացին՝ 202.1 հազար դրամ.
4. Համայնքի սեփականություն համարվող հողերից վաճավճարի պլանը կազմել է՝

690.0 հազար դրամ, փաստացի մուտքագրվել է 281.2 հազար դրամ.

5. Ղոտացիայի տարեկան հատկացումների պլանը կազմել է 17718.4 հազար դրամ, հատկացվել է 100%-ով:

2013 թվականի տարեկան սեփական եկամուտների պլանը 2012 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացվել է 2178.8 հազար դրամով, փաստացի սեփ. եկամուտները նվազել՝ 1293.8 հազար դրամով, այդ թվում՝ Հողի հարկի փաստացի եկամուտը 2013 թվականին 2012 թվականի համեմատությամբ նվազել է 600.0 հազար դրամով, գույքահարկի գծով ավելացել է 207.0 հազար դրամով, վարձավճարը ավելացել է 158.5 հազար դրամով, տեղական տուրքը նվազել է 6.2 հազար դրամով:

2013 թվականի դեկտեմբերի 28-ին կոնվերս բանկի էջմիածնի բաժանմունքում վճարվել է

ա/ հողի հարկ՝ 147.98 հազար դրամ

բ/ գույքահարկ՝ 249.6 հազար դրամ

գ/ վարձավճար՝ 498.3 հազար դրամ

ընդամենը՝ 498.3 հազար դրամ, որը մուտքագրվել է 2014 թվականի հունվարի 8-ին:

2013 թվականի ընթացքում կատարվել են

հետևյալ ծախսերը՝

1. Աշխատավարձ՝ 15446.8 հազար դրամ.

2. Էներգետիկ ծառայություններ՝ 1636.2 հազար դրամ.

3. Կապի ծառայություններ՝ 254.0 հազար դրամ.

4. Տրանսպորտի վարձակալություն՝ 960.0 հազար դրամ.

5. Ներքին գործողումներ՝ 130.0 հազար դրամ.

6. Համակարգչային ծառայությունների համար՝ 357.2 հազար դրամ.

7. Տեղեկատվական ծառայություններ՝ 179.1 հազար դրամ.

8. Ներկայացուցչական ծախսեր՝ 100.0 հազար դրամ. (դպրոցի շրջանավարտներին նվիրել են նվերներ).

9. Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ՝ 1270.0 հազար դրամ.

10. Մասնագիտական ծառայություններ՝ 97.6 հազար դրամ

11. Գրասենյակային նյութեր՝ 335.0 հազար դրամ.
 12. Տրանսպորտային նյութեր՝ 250.0 հազար դրամ.
 13. Այլ ծախսեր՝ 33.4 հազար դրամ.
 14. Զրի պոմպերի ձեռք բերում՝ 953.0 հազար դրամ.
 15. Նախագծահետազոտական ծախսեր՝ 50.0 հազար դրամ.
 16. Կոմունալ ծախսեր՝ 1200.0 հազար դրամ.
 17. Զրամատակարարման ծախսեր՝ 400.0 հազար դրամ.
 18. Շենք շինութ. կապ. նորոգում՝ 500.0 հազար դրամ.
 19. Մշակույթային միջոցառումներ՝ 350.0 հազար դրամ. (Մայիսի 9-ի հաղթանակի կապակցությամբ).
 20. Սոցիալական օգնություն՝ 1875.0 հազար դրամ (Սոցիալապես անապահով բնակիչներին հատկացվել է սոց օգնություն)
- 2013 թվականի ընթացքում ստացվել է 162 /հարյուր վաթսուն երկու/, ուղարկվել 157 /հարյուր հիսունյոթ/ փաստաթուղթ.

Հրավիրվել և անցկացվել է ավագանու 12 նիստ, ընդունվել է գյուղապետի 58 որոշում, արձակվել՝ 25 կարգադրություն:

Արձակվել է աշխատակազմի քարտուղարի 58 հրաման.

Քաղաքացիներին տրվել է 439 տեղեկանք:

Չնայած կատարված աշխատանքներին՝ համայնքում կան չլուծված խնդիրներ՝

1. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում.
2. Խմելու ջրի ջրագծերի նորոգում և պոմպերի տեղադրում:
3. Մանկապարտեզի շենքի կապիտալ վերանորոգում:
4. Կարեն Դեմիրճյան փողոցի գազաֆիկացում:
5. Ներտնտեսային ոռոգման ցանցի 450 գ/մ կառուցում:

Ավնաշենի գյուղապետ

Միսակ Միսակյան

Աշխատակազմի քարտուղար

Խաչիկ Հովակիմյան

